

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՁԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Լ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա»
ամբիոնի լաբորանտ*

Տուրիզմը մարդկանց ժամանակավոր տեղափոխությունն է մշտական բնակության վայրից մի այլ երկիր կամ բնակավայր՝ 24 ժամից մինչև 6 ամիս տևողությամբ՝ մեկ տարվա ընթացքում, կամ մեկ գիշերվա անցկացում ժամանցային, բուժման, սպորտային, հյուրընկալության, ճանաչողական, կրոնական և այլ նպատակներով՝ առանց որևէ գործունեության ծավալման:

Տուրիզմի տեսակներն են.

1. ռեկրեացիոն տուրիզմ,
2. վերականգնողական (բուժող) տուրիզմ,
3. ճանաչողական (էքսկուրսային) տուրիզմ,
4. սպորտային տուրիզմ,
5. էքստրեմալ տուրիզմ,
6. գյուղատնտեսական տուրիզմ,
7. լանդշաֆտային և աշխարհագրական նշանակության տուրիզմ,
8. ագրոտուրիզմ կամ գյուղական տուրիզմ:

Զբոսաշրջության խնդիրը նոր ձևերի բացահայտումն է, որոնք ավելացնում են տուրիզմի գրավչությունը և նպաստում են տուրիզմի նոր ճյուղերի զարգացմանը: Տուրիզմի ավանդական ձևերն աստիճանաբար իրենց տեղը զիջում են նոր ձևերին:

Հատկապես վերջին տարիներին հեռանկարային է ագրոտուրիզմը կամ գյուղական տուրիզմը:

«Ագրոտուրիզմ» տերմինը անգլերենից բառացիորեն թարգմանած «ecological tourism» և «ecotourism» բառերից է առաջացել: Շատ երկրներում հանդիպում է նաև «կանաչ տուրիզմ» տերմինը, որը նման է «բնական տուրիզմ» տերմինին, որն ավելի հազվադեպ է օգտագործվում: Ավելի մեծ տարածում է գտել «Sanfter Tourismus» տերմինը, որը թարգմանաբար նշանակում է «փափուկ տուրիզմ», որի համար կարևոր է ոչ միայն բիզնեսը, այլև՝ տուրիստական շրջանների բնական լանդշաֆտների պաշտպանությունը:

Յ. Կրեպպենդորֆի ձևակերպման համաձայն՝ տուրիզմի նոր քաղաքականության գլխավոր նպատակը կայանում է նրանում, որպեսզի երկարատև ժամանակով ապահովվի հնարավորինս շատ թվով մարդկանց ֆիզիկական, հոգեկան հանգիստ լանդշաֆտի հետ շփման պայմաններում՝ ելնելով տեղացիների հետաքրքրություններից: «Փափուկ տուրիզմի» ձևերն են հանգիստ, առանց տեխնիկայի զբաղմունքը, զբոսանքները հետիոտն, ձիով, փղերով, հեծանվով, լողը, դահուկներով զբոսանքը և այլն:

Պ. Հասսլահերի բնորոշմամբ՝ կա չորս «ռազմավարական» բաղադրիչ, որով բնութագրվում է «փափուկ տուրիզմը». առանց տեխնոլոգիաների տուրիզմ, ինքնուրույն տարածաշրջանային զարգացում, սոցիալական պատասխանատվու-

թյուն, մշակութային պատասխանատվություն: Ըստ Հասարակների՝ «փափուկ տուրիզմը» չի կարող զարգանալ բոլոր տուրիստական շրջաններում:

Կառուցվածքով նման, բայց բովանդակությամբ այլ բնորոշում է առաջարկում Կ. Հ. Ռոհլիտցը: Ըստ նրա՝ «փափուկ տուրիզմը» իրենից ներկայացնում է համակարգ, որը կազմված է չորս փոխադարձ տարրերից. հյուրերի օպտիմալ հանգիստ, «անմիջական» լանդշաֆտ, այսինքն՝ այնպիսին, որի հետ հյուրերն առնչվում են անմիջականորեն, և տուրիստական գործունեության եկամուտներ:

Ըստ Դ. Կրամերի՝ «փափուկ տուրիզմի» համակարգում կարևորագույն բաղադրիչը համարվում է ոչ թե պարզապես տուրիստը, այլ գիտակցված, պատրաստված տուրիստը:

Ըստ Ա. Վ. Դրոզդովի՝ ամենակարևոր գիծը ագրոտուրիզմի ձգտումն է բնական, անխախտ լանդշաֆտներին:

Այս ամենը խմբավորելով՝ կարելի է ասել, որ ագրոտուրիզմը պետք է.

1. ուղղված լինի դեպի բնությունը, հատկապես բնական ռեսուրսների օգտագործմանը;

2. չպատճառի վնաս կամ նվազագույն կերպով վնասի շրջակա միջավայրին;

3. կենտրոնանա էկոլոգիական կրթության և տարածման վրա՝ համագործակցելով բնության հետ;

4. հոգ տանի տեղական սոցիալ-մշակութային տարածքի պահպանման մասին;

5. ապահովի այն տարածքների տնտեսապես էֆեկտիվությունը և կայուն զարգացումը, որտեղ այն գտնվում է:

Ագրոտուրիզմը հանգիստն է գյուղական վայրում: Հանգստի այս ձևը այցելուներին, զբոսաշրջիկներին, հատկապես քաղաքաբնակներին թույլ է տալիս տնտեսության վարման մասին ծեռք բերել գիտելիքներ, ժամոթանալ գյուղատնտեսական մթերքների արտադրությանը, ճաշակել բնական, թարմ և առողջարար սննդամթերք, ինչպես և օգտվել ոչ սովորական պայմաններում ժամանցի հնարավորությունից:

Ագրոտուրիզմը հնարավորություն է տալիս մեր տնտեսությունը կամ գյուղմթերքների շուկան դարձնել արտակարգ մի զբաղմունք: Սա յուրաքանչյուր գյուղաբնակի հնարավորությունն է տնտեսությունը կամ բիզնեսը դարձնել ավելի բազմազան, ընդարձակել այն, որպեսզի հաճախորդներ հրապուրելու միջոցով ավելացնի եկամուտը:

Ագրոտուրիզմը հնարավորություններ է ստեղծում շեշտադրել գյուղատնտեսական բիզնեսի առանձնահատուկ ճյուղերը /գինեգործություն, պանրի և կաթի արտադրություններ, պտղատու այգիներ, չորանոցներ/:

Շփվելու ունակությունը, բարեկամական ու բարեհամբյուր վերաբերմունքը, ջերմ հյուրասիրությունն ու նպաստավոր այլ պայմանները՝ որպես ագրոտուրիզմի կազմակերպման կարևոր նախապայմաններ, առկա են մեր մարզի գյուղական համայնքներում:

Ինչպես բազմաթիվ լեռնային երկրներ, Հայաստանը նույնպես առանձնանում է հարուստ ռեկրեացիոն ռեսուրսներով: Մեր լեռնաշխարհի գեղատեսիլ բնությունը, անկրկնելի լանդշաֆտները, պատմամշակութային և ժայռակոփ անձեռակերտ հուշարձանները, հարուստ բուսական աշխարհը, հայկական խո-

հանոցի յուրահատկությունները և ավանդական հյուրասիրությունը կարևոր գործոններ են ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման համար:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում զբոսաշրջության այս ուղղությունը բուռն զարգացում է ապրում: Ի դեպ, ագրոտուրիզմի զարգացումն ուղղակիորեն կապված է ուրբանիզացման գործընթացների հետ: Այսինքն, քաղաքային բնակավայրերի և բնակչության ավելացումը, որպես կանոն, ուղեկցվում է գյուղական բնակավայրերի և բնակչության կրճատումով: Այս գործընթացը քաղաքային բնակչության համար առաջացնում է բնության և գյուղական կենցաղի հետ հաղորդակցվելու սահմանափակումներ: Հետևաբար, մի կողմից՝ գյուղական ծագում ունեցող քաղաքային բնակչության կարոտախտը, և մյուս կողմից՝ առողջ ապրելակերպի համար բնական միջավայրից և էկոլոգիապես մաքուր սննդամթերքից օգտվելու անհրաժեշտությունը դրսևորում են ագրոտուրիզմի նկատմամբ աճող պահանջարկ:

Ներկայումս ագրոտուրիզմը դարձել է ժամանակակից զբոսաշրջային արդյունաբերության կարևորագույն հատվածներից մեկը: Զբոսաշրջության էլիտար, արկածային, արշավային և այլ ձևերի համեմատությամբ, ագրոտուրիզմն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք նպաստում են այս ձևի արագ զարգացմանը:

Անդրադառնանք այդ առանձնահատկություններից ամենակարևորներին:

1. Ագրոտուրիզմը մատչելի է բնակչության գրեթե բոլոր խավերի համար, քանի որ համեմատաբար նվազ ծախսատար է: Օրինակ՝ ներկայումս ձևավորված գների պայմաններում Հայաստանի գյուղական բնակավայրերում հանգիստը մեկ մարդ-օրվա հաշվով կազմում է 5-7 հազար դրամ: Մինչդեռ սովորական հանգստյան տներում հանգստանալու համար 2-3 անգամ ավելի գումար է պահանջվում: Ընտանիքով հանգստանալու դեպքում ագրոտուրիստի ծախսերը պակասում են 35-40 տոկոսով:

2. Ագրոտուրիզմը, որպես կանոն, ընտանեկան տուրիզմ է, որը հնարավորություն է ընձեռում հատկապես երեխաների բարոյահոգեբանական և աշխատանքային դաստիարակության համար: Որպես կանոն, գյուղական տուրիզմը ցանկության դեպքում գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և գյուղական կենցաղին հաղորդակցվելու լավագույն հնարավորություններ է ստեղծում:

3. Ագրոտուրիզմի կազմակերպումը մեծածավալ ներդրումներ չի պահանջում: Այստեղ, որպես հիմնական ներդրող, հանդես է գալիս գյուղական բնակչության համեմատաբար ունևոր խավը: Ուստի գյուղական զբոսաշրջության զարգացումն ինքնին կարևոր ազդակ է դառնում նաև գյուղատնտեսության զարգացման համար:

4. Ագրոտուրիզմի զարգացումը նպաստում է նաև գյուղական կյանքի աշխուժացմանը, գյուղում սոցիալական ենթակառուցվածքների և մշակույթի զարգացմանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ագրոտուրիզմը դասել է ոլորտի գերակա ուղղությունների շարքում և առաջարկություն է ներկայացրել ՄԱԿ-ի ՊԳԿ-ին՝ ծրագրային առաջնահերթությունների ցանկում ներառելու համար: Հատկապես կարևորվում են միջազգային փորձի ուսումնասիրությունը, անհրա-

ժեշտ ենթակառուցվածքների զարգացումը և ագրոտուրիզմի կառավարման արդիական համակարգի ներդրումը:

Վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից իրականացվող ծրագրերը հույս են ներշնչում, որ մոտ ապագայում տուրիզմը, այդ թվում ագրոտուրիզմը, կդառնա Հայաստանի տնտեսության առաջավոր ոլորտներից մեկը:

Տուրիզմի այս տեսակը գայթակղիչ է հիմնականում եվրոպական երկրների բնակչության, հատկապես մեծահասակների համար, որոնք, հոգնելով քաղաքակրթությունից, ցանկանում են վայելել գյուղական էկոլոգիապես մաքուր սնունդն ու թարմ օդը: Տուրիստներին գրավում են նաև գյուղական ավանդույթներն ու սովորույթները, որոնք ավելի լավ են պահպանվում գյուղում, քան քաղաքում: Ինչպես նաև նկատվում է տենդենց հյուրանոցներից դեպի գյուղական բնակավայրեր:

Ի՞նչ է տալիս ագրոտուրիզմը զբոսաշրջիկներին:

Հոգևոր արժեքներ- գյուղական բնակավայրերում կան մեծ թվով եկեղեցիներ, վանքեր, մատուռներ, որոնք գրավում են բազմաթիվ զբոսաշրջիկներին: Պատմամշակութային հուշարձանների մեծ մասը գտնվում է գյուղական համայնքների տարածքում: Տուրիստները, այցելելով այս կամ այն գյուղական տարածք՝ որևէ պատմամշակութային հուշարձան տեսնելու համար, ծանոթանում են տվյալ գյուղի ավանդույթներին, սովորույթներին, կարող են մասնակցել այդ ժամանակահատվածում տվյալ գյուղում տեղի ունեցող որևէ արարողության, որոշ ժամանակով մնալ գյուղում, ապրել գյուղի կենցաղով: Այս ամենի արդյունքում տուրիստները ստանում են մեծ բավարարվածություն և հոգևոր սնունդ:

Հոգեբանական, բարոյական արժեքներ - գյուղական համայնքներում մեծանում է ազատ (առանց բնակչի) առանձնատների թիվը: Նկատվում է նաև տենդենց, որ մեծաթիվ տուրիստներ ցանկանում են իրենց հանգիստը անցկացնելու ժամանակահատվածում մնալ ոչ թե հյուրանոցներում, այլ առանձնատներում, քանի որ հյուրանոցների ներկայիս վիճակը հոգեբանորեն ճնշում է շատ զբոսաշրջիկներին: Այդ պատճառով գյուղական տուրիզմի զարգացումն ունի նաև հոգեբանական-բարոյական մեծ նշանակություն: Բացի դրանից, գյուղերում ավելի բարձր են բարոյական արժեքները, որոնք ևս գրավիչ են դառնում տուրիստների համար:

Ագրոտուրիզմի ի՞նչ զարգացման հեռանկարներ ունի Գեղարքունիքի մարզը:

Գեղարքունիքի մարզն աչքի է ընկնում պատմամշակութային և երկրաբանագեոմորֆոլոգիական բազմաթիվ հուշարձաններով: Երկրաբանագեոմորֆոլոգիական հուշարձանների թվին են պատկանում Գռիծորի տրոգային հովիտը, Սարիկայայի հրվանդանի մերկացումները, բազմաթիվ գեղատեսիլ հրաբխային կոները, հանքային աղբյուրները:

Գավառագետի վտակ Գռիծորը իրենից ներկայացնում է մի գեղատեսիլ սառցադաշտային տրոգ՝ 200մ խորությամբ, 300մ լայնությամբ և 1կմ երկարությամբ: Տրոգի հատակի երկարությամբ ձգվող խզվածքային գոտուց բխում են բազմաթիվ հանքային աղբյուրներ:

Տարածքում մեծ թիվ են կազմում բազմաթիվ հրաբխային կոները, որոնք գեղագիտական հաճույք են պատճառում զբոսաշրջիկներին: Հատկապես գեղեցիկ են Արմաղանի և Աժդահակի հրաբխային կոները, որոնց խառնարաններում

ծնավորվել են լճեր:

Գեղամա լեռնավահանի մերձգագաթային սարավանդի վրա է գտնվում Ակնա լիճը, որի ափի մոտ գտնվող հրաբխային կոնի լանջերի ռելիեֆը թողնում է «լուսնային լանդշաֆտի» տպավորություն:

Նորատուսի թերակղզու ծայր արևելքում՝ Սարիկայայի հրվանդանի շրջանում է գտնվում մի ուշագրավ երկրաբանական մերկացում, որտեղ մոտ 100մ հզորությամբ պլիոցենյան հասակի լճափյուվիազյացիալ նստվածքներում հստակ երևում են նորագույն տեկտոնական շարժումներով ձևախախտված շերտերը:

Մեծ թիվ են կազմում նաև պատմամշակութային հուշարձանները: Գեղարքունիքում մարդը բնակություն է հաստատել դեռ պալեոլիթից:

Գեղարքունիքի մարզում, Գավառագետի աջ ափին, Գավառից 5կմ հյուսիս-արևելքում է գտնվում Նորատուս գյուղը, որը Գեղարքունի գավառի հնագույն բնակավայրերից է, ուր պահպանվել են բազմաթիվ հուշարձաններ: Նորատուսը համարվում է խաչքարերի անտառ, յուրահատուկ բացօթյա թանգարան, խաչքարային արվեստի գործերի եզակի հավաքածու, վայր, որը խորհրդավոր տպավորություն է թողնում Հայաստանի մասին: Նորատուսի հարավային կողմում, «Թորոյի պալեր» կոչվող քարափների հարավային մասում գտնվող քարանձավի շուրջը պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ: Գյուղից 2կմ արևելք, լճի ափամերձ հարթության վրա վեր է խոյանում 200մ հարաբերական բարձրությամբ խարամային հրաբխային կոն, որը ժայթքել է հոլոցենում: Նրա արևելյան լանջերում կան 2 ընդարձակ քարայրներ, որոնք եղել են նախնադարյան մարդու կացարաններ: Իսկ կոնի գագաթային մասում պահպանվել են կիկլոպյան ամրոցի մնացորդներ: Նորատուսը զբոսաշրջիկներին գրավում է իր հանրահայտ խաչքարերով և վանքերով: Նորատուսի մեծ, այժմ էլ գործող պատմական գերեզմանոցը համանուն հուշարձանների խմբում յուրահատուկ տեղ ունի: Գերեզմանոցի պատմական որոշակի կարևորություն ունեցող վիմագիր հիշատակությունների թիվը անցնում է 250-ից: Հին գերեզմանոցի տարածքում կան նաև սրբատաշ քարերով շինված երկու մատուռներ. մեկը շինված է 1211թ., մյուսը՝ 1714թ.: Ամենահին խաչքարն այս մասում թվագրված է 1225թ., սակայն գերեզմանատան մեջ, և հատկապես ս. Մատուռի շուրջը, ընկած և կիսականգուն վիճակում կան կլոր և քառակուսի բներով կոթողներ և նրանց գլխի անջատ խոյակներ, որոնք վերաբերում են 9-րդ դ. և ավելի վաղ ժամանակաշրջանների:

Խաչքարեր կան սփռված նաև գյուղի շուրջը, որոնք հայտնի են յոթ խաչքարեր անունով: Գյուղի կենտրոնում գտնվում է ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված 9-րդ դարի վերջին՝ Գեղարքունիի Սահակ իշխանի կողմից: Եկեղեցին գմբեթավոր սրահ է եղել՝ շինված համակ սրբատաշ և մեծ քարերով, վերջին դարերում փլվել է կամ, ինչպես ավանդաբար ասում են, գմբեթն ու ծածկը ավերվել են Լենկ-Թեմուրի արշավանքի ժամանակ: Եկեղեցին ունեցել է պարսպափակ բակ, ուր այժմ էլ կան բազմաթիվ խաչքարեր և տապանաքարեր՝ մեծ մասն արդեն տեղից խախտված: Գյուղի հարավային եզրին է գտնվում ս. Գրիգոր Լուսավորիչ կամ Դափուց վանքը: Այն այժմ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցի է, որին, արտաքուստ հյուսիսում և հարավում, ավելացվել են երկու խորաններ: 2007թ-ին վանքը վերանորոգվեց և դարձավ գործող եկեղեցի:

Ջրոսաշրջիկների այցելության տեսակետից կարևոր է Հայրավանքը:
Հայրավանքը կամ հայր Հովհանու վանքը գտնվում է համանուն գյուղի հյուսիս-արևելյան մասում, լճի մեջ խորացած մի քարքարոտ հրվանդանի վրա, որի նեղ պարանոցը պարսպելով, վանքն ստացել է անմատչելի բերդի տեսք:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան» Ազգային պարկը: Տարածքը կազմում է 147 343 հա, որից 22 585 հա ցամաքային տարածքներ են: Պարկում առանձնացված են հատուկ գոտիներ՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրեացիոն, որտեղ գործում են հանգստյան տներ, հյուրանոցներ, հանգստի կազմակերպման անհատական օբյեկտներ: Առանձնանում է նաև տնտեսական գոտին, որն ընդգրկում է ձկնային և անտառային տնտեսությունները: Ջարգանում է խեցգետնաբուծությունը: Պարկում հայտնի են շուրջ 1600 տեսակի բույսեր:

Հայաստանում տարածված 60 տեսակի ջրային բույսերից 19-ը աճում են այստեղ: Լճի մակարդակի իջեցման հետևանքով ազատված հողագրունտները ծածկված են արհեստական անտառներով: Կենդանական աշխարհը ներկայացված է ձկների 9, երկկենցաղների 3, սողունների 17, թռչունների 267, կաթնասունների 34 տեսակներով: Կան սաղմոնազգի և ծածանազգի բնաշխարհիկ ձկնատեսակներ՝ Սևանի իշխան, բախտակ, բեղլու, կողակ:

Ազգային պարկի ցամաքային մեծ հատված է զբաղեցրել Սևանի թերակղզին, այն երիզված է արհեստական անտառակներով, իսկ զագաթային մասում պահպանվել են լեռնատափաստանային բուսականության պատառիկներ:

Պատմաճարտարապետական հուշարձանները Գեղարքունիքի մարզում այնքան շատ են, որ դրանց նկարագրությունը չենք կարող տալ մի հոդվածում: Սակայն մարզի ամենակարևոր և գլխավոր գրավչությունը Սևանա լիճն է, որին ևս այս հոդվածում չենք անդրադառնա:

Պատմամշակութային վայրերից և հանգստի գոտիներից բացի, Գեղարքունիքի մարզը զբոսաշրջիկներին գրավում է նաև ագրոտուրիզմի կամ գյուղական տուրիզմի տեսանկյունից:

Վերջին տարիներին մարզի բնակչության մեծ մասը գտնվում է արտերկրում՝ աշխատանք չլինելու պատճառով: Պրա համար կան բազմաթիվ թափուր բնակարաններ, որտեղ կարող են հանգստանալ մարզ այցելած զբոսաշրջիկները, որոնք հետաքրքրվում են ագրոտուրիզմով: Քանի որ մարզում հյուրանոցները քիչ են, իսկ եղածներն էլ մատչելի չեն շատերի համար, այդ պատճառով տուրիստները գերադասում են վարձակալել առանձնատներ, քան մնալ հյուրանոցում: Բացի դրանից, մնալով գյուղական պայմաններում, տուրիստները կարող են օգտվել գյուղական բոլոր հնարավորություններից: Եվրոպական երկրներից, ինչպես նաև խոշոր քաղաքներից եկած տուրիստների համար շատ կարևոր է լեռնային մաքուր օդի, սառնորակ ջրի, անարատ սննդի առկայությունը, ինչը նա կարող է վայելել ամեն օր՝ ապրելով գյուղական պայմաններում: Կան զբոսաշրջիկներ, որոնց գրավում են գյուղական կենցաղը, սովորույթներն ու ավանդույթները: Կան տոներ, որոնք մարզում նշվում են մեծ շուքով: Օրինակ՝ մարզի համայնքների մեծ մասում մեծ շուքով նշվում են «Վարդավառը» կամ «Ար. Խաչը» (Սբխեչ) և բազմաթիվ այլ տոներ, որոնց կարող են մասնակցել նաև այդ ժամանակահատվածում տվյալ համայնքում գտնվող զբոսաշրջիկները:

Շատ տուրիստների գրավում է գյուղական կենցաղը: Նրանք ցանկանում են

տեսնել, թե ինչպես են ապրում գյուղում, ինչ աշխատանքներ են կատարում: Նրանց համար զարմանալի են հարևանական կապերն ու փոխհարաբերությունները: Օտարները չեն հասկանում այն, որ հարևանները կարող են ամեն օր այցելել միմյանց, իրար կողքի լինել ուրախության և դժվարության ժամանակ:

Ջրոսաշրջիկ կանանց և աղջիկներին հատկապես գրավում է հաց թխելու արարողությունը (թոնրով), ինչպես նաև, որոշ գյուղերում դեռևս պահպանված, խնոցու (կարագ հանելու) արարողությունը: Տղամարդիկ ցանկություն են հայտնում մասնակցելու խոտհունձին (գերանդիով):

Ջրոսաշրջիկներին գրավում է նաև անարատ սննդի առկայությունը. խմեն թարմ կաթ, ուտեն նոր թխած հաց՝ տնական պանրով: Ինչպես նաև հետաքրքիր են ազգային ուտեստները: Օրինակ՝ Գավառում նրանց գրավում է «Քյավառի քյուֆթան», գաթան, հայկական փախլավան, ինչի համար նույնիսկ պատրաստ են լավ վճարել:

Գեղարքունիքում կարելի է կազմակերպել հանգիստ՝ հեռու լինելով աղմկոտ քաղաքակրթությունից, բայց և չկտրվելով քաղաքակրթությունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **А. В. Бавкин**, Специальные виды туризма, учебное пособие, Ростов-на-Дону, 2008
2. **В. Ф. Буйденко**, Туризм // учебник, 2008
3. [Ahttp://www.suslovfarm.com/turizm.htm](http://www.suslovfarm.com/turizm.htm)
4. <http://www.selotour.ru/>

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ НОВЫХ ВИДОВ ТУРИЗМА В ГЕГАРКУНИКСКОМ МАРЗЕ

Л. А. Мкртчян

Работа посвящена рассмотрению перспектив развития новых видов туризма в Гегаркуникском марзе.

Как показал анализ, агротуризм является наиболее динамической отраслью туризма. География агротуризма формируется. Гегаркуникский марз является одним из перспективных районов развития агротуризма.

THE DEVELOPMENT TENDENCIES OF THE LATEST FORMS OF TOURISM IN THE MARZ OF GEGHARKUNIK

L. A. Mkrtchyan

As the analyzis has shown, agrotourism is considered to the one of most dynamic spheres of tourism. Geography of agrotourism comes out level-by-level, The Region of Gegharkunik is one of the regions which has a perspective of developing.